ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԿԱՐՍԻ ՄԱՐԶՈՒՄ (XIX Դ. ՎԵՐՋ—XX Դ. ՍԿԻԶԲ)

ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ

Վերջին երեք-չորս տասնամյակներում սովետահայ պատմագիտական միտքը նշանակալի նվաճումների է հասել Արևելյան Հայաստանի նոր ժամանակաշրջանի տնտեսական պատմության ուսումնասիրության ասպարեզում[1]։ Սակայն հետազոտողները մեծ մասամբ ուսումնասիրության նյութ են դարձրել միայն Երևանի նահանգը, իսկ Արևելյան Հայաստանի բաղկացուցիչ մասը կազմող Կարսի մարզին անդրադարձել են հարևանցիորեն (Մ. Ադոնց, Մ. Ներսիսյան, Խ. Ավդալբեկյան, Վ. Պարսամյան) կամ բոլորովին շրջանցել են այն (Վ. Ռշտունի, Հ. Թոմանյան, Ա. Մարուխյան, Ա. Եգանյան, Մ. Խոնդկարյան)։ Այդ տեսակետից բացառություն են կազմում Ա. Համբարյանը և Ա. Պողոսյանը, որոնք լուսաբանել են մարզի սոցիալ-տնտեսական պատմության շատ խնդիրներ, բայց և այնպես որոշ հարցեր տակավին կարոտ են լրացուցիչ ուսումնասիրության։ Փորձենք ավելի հանգամանորեն լուսաբանել մարզի գյուղատնտեսության գլխավոր ճյուղերի՝ հացամշակության և անասնապահության, զարգացման պատմությունը XIX դ. վերջին և XX դ. սկզբին։

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի հետևանքով Կարսի մարզը միացվեց Ռուսաստանին։ Դրա շնորհիվ այն ներառվեց սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական զարգացման տեսակետից անհամեմատ ավելի բարձր աստիճանի վրա գտնվող երկրի ոլորտը։

Չնայած ցարիզմի գաղութային քաղաքականությունը դանդաղեցնում էր

---

[1] В. А. Рштуни, Крестьянская реформа в Армении в 1870 г., Ереван, 1947; «Крестьянское движение в Армении в XIX веке», сост. проф. В. Рштуни при участии К. Степаняна, Ереван, 1948; его же, Аграрная политика царизма и крестьянское движение в Армении в начале XX в; О. Е. Туманян, Экономическое развитие Армении, Ереван, 1954; М. А. Адонц, Экономическое развитие восточной Армении в XIX в., Ереван, 1957; А. С. Амбарян, Развитие капиталистических отношений в армянской деревне, Ереван, 1959 г. *Ա. Մարուխյան, Գյուղացիների դրությունը նախասովետական Հայաստանում (1900—1920 թթ.), Երևան, 1948, Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ (1850—1870 թթ.), Երևան, 1955, Խ. Հ. Ավդալբեգյան, Հողային հարցը Արևելյան Հայաստանում (1801—1917 թթ.), Երևան, 1959, Վ. Հ. Ռշտունի, Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության, հ. Ա, Երևան, 1960, հ. Բ, Երևան, 1968, Ա. Մ. Պողոսյան, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կարսի մարզում, Երևան, 1961, Ա. Եգանյան, Հայաստանի հետռեֆորմյան ագրարային հարաբերությունները, Երևան, 1964, Վ. Ա. Պարսամյան, Ցարիզմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում, Երևան, 1940, Հայ ժողովրդի պատմություն (բուհական դասագիրք), հ. 3, Երևան, 1967, Մ. Հ. Ադոնց. Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագիտական միտքը XX դ. սկզբին, Երևան, 1968, Մ. Ա. Խոնդկարյան, Արևելյան Հայաստանի ագրարային հարաբերությունների պատմությունից (XIX դ. վերջ և XX դ. սկիզբ), Երևան, 1974։*

մարզի տնտեսական զարգացումը, այնուամենայնիվ, Ռուսաստանի կազմում այն նշանակալի չափով առաջադիմեց։ Մարզը գնալով ավելի ու ավելի էր կապվում համառուսական շուկայի հետ։ Դրան մեծ չափով նպաստեց նաև երկաթուղու և բարեկարգ ճանապարհների անցկացումը։ 1899 թ. հուլիսի 21-ին շահագործման հանձնվեց Կարս—Թիֆլիս երկաթուղագիծը, որի շնորհիվ մեծացավ մարզի բեռնափոխադրումների ծավալը։

Կարսի մարզի տնտեսական դեմքը բնորոշում էին հացահատիկային կուլտուրաների մշակումը և անասնապահությունը։ Հողերի բերրիության և մասնագիտացման շնորհիվ մարզում հացամթերքի միջին բերքատվությունը Անդրկովկասի միջինից զգալիորեն բարձր էր։ Այն բարձր էր հատկապես ջրարբի հողերում, որոնք կազմում էին մարզի մշակելի հողերի մոտ 9%-ը[2]։ Այսպես, օրինակ, եթե 1911 թ. Անդրկովկասի նահանգների ու մարզերի ջրարբի հողերի մեկ դեսյատինից ստացվող հացամթերքի միջին բերքատվությունը 54 փութ էր, ապա մարզինը՝ 84 փութ, իսկ անջրդի հողերինը՝ համապատասխանաբար 47 և 59 փութ[3]։ Պաշտոնական տվյալներով մարզի հացահատիկային կուլտուրաների ցանքատարածությունը և համախառն բերքը 1884—1913 թթ. ունեին հետևյալ պատկերը.

Աղյուսակ № 14

Թվականներ	Ցուխ կամ տնտեսություն	Երկսեռ բնակչություն	Ցանքատարածություն (դեսյատին)	Բոլոր հացամթերքների ցանք	Բոլոր հացամթերքների բերք փթերով	Մեկ տնտեսությանը բերք ընկնում է	Բնակչության մեկ շնչին զուտ բերք ընկնում է
1884—1887	23682	172366	72000	530000	2648427	111,8	15,4
1888—1891	24469	193769	100900	609937	2744286	112,1	14,2
1894—1896	24933	218912	88395	747892	4116729	165,1	18,8
1897—1899	25483	235963	101905	1065300	4863134	190,8	20,6
1900—1905	31661	272228	131468	1268014	5790326	182,9	21,2
1909—1911	38649	320579	145285	1496668	7138010	184,7	22,3
1912—1913	40523	336339	179047	3263880	11096448	273,8	33,0

Աղյուսակից երևում է, որ հացահատիկային կուլտուրաների համախառն բերքը (չհաշված 1892—1893 և 1907 թթ. անբերրի տարիները) 1884—1913 թթ. աճել է ավելի քան 4,1 անգամ, իսկ ցանքատարածությունները՝ մոտ 2,4 անգամ։ Դա նշանակում է, որ մարզի հացահատիկային արտադրությունն ինտենսիվ բնույթ է կրել։

Մարզի հացահատիկային կուլտուրաների հիմնական տեսակներն էին ցորենը և գարին, որոնց տեսակարար կշիռն ընդհանուր հացատեսակների մեջ կազմում էր շուրջ 95%։ Այս հացատեսակները մարզում գրեթե հավասար քանակությամբ էին մշակվում։ Այսպես, օրինակ, 1886 թ. հավաքվել է ցորեն՝ 1289385 փութ, գարի՝ 1296410 փութ, 1897 թ. ցորեն՝ 2450200 փութ, գարի՝

2 ՀՍՍՀ պետական կենտրոնական պատմական արխիվ (այսուհետև՝ ՀՍՍՀ ՊԿՊԱ), ֆ. 375, ց. 1, գ. 116, թ. 4։

3 «Сельскохозяйственный обзор по Закавказью за 1911 год», Тифлис, 1912, стр. 23.

4 «Всеподданнейший отчет о состоянии Карсской области за 1885—1893 гг.», «Обзор Карсской области за 1894—1910 гг.», «Кавказский календарь на 1913—1915 гг.».

2503300 փութ և 1911 թ. ցորենն՝ 3469867 փութ, դարի՝ 3795852 փութ։ Ցորենը հիմնականում գարնանացան էր, սակայն որոշ շրջաններում (օրինակ, Կաղզվանի օկրուգում), որտեղ ձմեռը համեմատաբար ավելի մեղմ է, ցանվում էր նաև աշնանացան ցորեն։ Մարզում 1900 թ. աշնանացան ցորենի համախառն բերքը կազմել է 530479 փութ, որից 402208 փութը ստացվել է Կաղզվանի օկրուգից[5]։ Թեև տկսած դարասկզբից ապրանքադրամային հարաբերությունների զարգացման հետևանքով ցորենի ապրանքային նշանակությունը մեծացավ, մարզի բարձրավանդակային գիրքը և կլիմայական խիստ պայմանները նրա ցանքատարածությունների շարունակ ընդարձակման հնարավորություն չէին ընձեռում։ Այդ իսկ պատճառով մարզի բնակչության տնտեսական կյանքում շարունակում էր կարևոր դեր խաղալ ցրտադիմացկուն գարին, որը հատկապես լայնորեն օգտագործվում էր մահմեդական ազգաբնակչության շրջանում։ Բացի ցորենից և գարուց, մարզում քիչ քանակությամբ մշակվում էին տարեկան, եգիպտացորեն, բրինձ, կտավատ, վարսակ, կորեկ, հաճար, հընդկացորեն և այլն։

Կարսի մարզի հացամթերքը վաճառքի էր հանվում ներքին և արտաքին շուկաները։ Ոչ լրիվ տվյալներով 1909—1913 թթ. միայն երկաթուղով մարզից արտահանվել էր տարեկան միջին հաշվով 610 հազ. փութ հացահատիկ և 175 հազ. փութ ալյուր[6]։

Առևտրական հացամշակության զարգացումն ուղեկցվում էր գյուղատնտեսական տեխնիկայի կատարելագործումով։ Դարասկզբին մեքենաների ու կատարելագործված գործիքների ներմուծումը մարզում ուներ հետևյալ պատկերը՝ 1901 թ.՝ 3965 փութ, 1902 թ.՝ 7994, 1903 թ.՝ 9788, 1906 թ.՝ 8780, 1907 թ.՝ 7965, 1908 թ.՝ 5919 փութ[7]։ 1906—1908 թթ. գյուղատնտեսական գործիքների ներմուծման ատիճանական անկումը բացատրվում է երկրում տիրող քաղաքական անկայուն վիճակով։ Բացի այդ, 1907 թ. անբերրիությունը բնականաբար կրճատեց երկրագործական գործիքների պահանջարկը։ Սկսած 1909 թ. գործիքների ներմուծման ծավալը կրկին մեծանում է։ Արդեն 1913 թ. մարզ է ներմուծվել 24675 փութ գյուղատնտեսական գործիք ու մեքենա[8]։ Դարասկզբին մարզի գյուղատնտեսական արտադրության մեջ սկսում են մուտք գործել երկաթի գութանները, կալսիչները, քամհարները, հնձիչները և այլն։ Արդեն 1909 թ. մարզի գյուղատնտեսության մեջ օգտագործվում էր 2369 երկաթե գութան, 378 հնձիչ մեքենա, 569 քամհար, 18 ձիու փոցխ, 2 ցանիչ մեքենա[9]։

Մարզի գյուղատնտեսության զարգացման գործում որոշ դեր խաղացին նաև ռուս վերաբնակիչները։ Նրանք նպաստեցին բանջարանոցային մի շարք կուլտուրաների՝ կարտոֆիլի, կաղամբի, ճակնդեղի և մաղադանոսի տարածմանը։ Դրանցից հատկապես լայն տարածում ստացավ կարտոֆիլը։ Եթե

---

[5] «Обзор Карсской области за 1900 г.», Карс, 1901, ведомость № 1.

[6] ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 375, ց. 1, գ. 74, թ. 10։

[7] Е. С. Каичер, Опыты экономических исследований кавказской деревни, Тифлис, 1910, стр. 13.

[8] «Краткий обзор коммерческой деятельности закавказских железных дорог по статистическим данным о перевозках пассажиров и грузов за 1916 год», Тифлис, 1918, стр. 85

[9] «Кавказское хозяйство». Тифлис, 1910, № 8.

1893 թ. մարզում ստացվել է 34 հազար փութ կարտոֆիլ, ապա 1909 թ.՝ 276320 փութ[10]։

Ռուսաստանին միացնելուց հետո զարգացավ նաև մարզի գյուղատնտեսության մյուս կարևոր ճյուղը՝ անասնապահությունը։ Դրան նպաստում էր հարուստ ալպիական մարգագետինների, ընդարձակ արոտավայրերի և խոտհարքերի առկայությունը։ Մարզի արոտավայրերը 700—750 հազար դեսյատին էին, իսկ խոտհարքերը՝ 80—100 հազար դեսյատին։ Խոտհարքերի մեկ դեսյատինից ստացվում էր մինչև 300 փութ խոտ[11]։ Անասունների գլխաքանակի աճը Կարսի մարզում XIX դ. վերջին և XX դ. սկզբին ցույց է տալիս հետևյալ աղյուսակը.

Աղյուսակ № 2[12]

Թվականներ	Ծուխ կամ տնտեսություն	Երկսեռ բնակչություն	Ընդհանուր անասնաքանակ	Խոշոր եղջերավոր անասուն	Մանր եղջերավոր անասուն	1 ծխին ընկնում է անասուն	1 շնչին ընկնում է անասուն
1884	22578	162018	540379	171971	347677	24	3,30
1885—1887	24045	175815	663108	193928	445529	27,5	3,77
1888—1890	24426	191403	697892	226742	446342	28,5	3,65
1891—1893	24627	204002	638560	230403	377341	25,9	3,13
1894—1896	24933	218912	681742	237449	415054	27,3	3,11
1897—1899	25483	235963	821167	169186	517727	32,2	3,47
1900—1905	31661	272228	992308	373220	583020	31,3	3,64
1907—1910	37961	313749	833389	386175	406827	22,0	2,66
1911—1912	39531	328110	995779	494594	457064	25,2	3,03
1913	41024	340492	1232227	556316	634656	30,4	3,62

Աղյուսակից երևում է, որ 1884—1913 թթ. մարզի ընդհանուր անասնաքանակը 540379-ից հասել է 1232227 գլխի, այսինքն՝ 30 տարում աճել է 2,28 անգամ։ Եթե 1884 թ. մարզի բնակչության մեկ շնչին ընկնում էր միջին հաշվով 3,3 անասուն, ապա 1913 թ.՝ 3,62 անասուն։

Աղյուսակը նաև ցույց է տալիս, որ 1891—1893 և 1907—1910 թթ. մարզի բնակչության մեկ շնչին ընկնող անասնաքանակը նկատելի չափով պակասել է։ Այդ բացատրվում է ամենից առաջ նշված թվականներին տեղի ունեցած անբերրիությամբ ու սովով։ 1892—1893 թթ. անասնաքանակը պակասել է 82925 գլխով կամ 1891 թ. հետ համեմատած՝ 13,3%-ով[13], 1907 թ.՝

---

10 «Всеподданнейший отчет о состоянии Карсской области за 1893 г.», Карс, 1894, ведомость № 1 и «Обзор Карсской области за 1909 г.», Карс, 1910, стр. 27.

11 А. А. Кофорд, Сельскохозяйственные очерки Закавказья, СПб., 1904, стр. 29.

12 «Всеподданнейший отчет о состоянии Карсской области за 1885—1893 гг.» и «Обзор Карсской области за 1894—1910 гг.», «Кавказский календарь» на 1913—1915 гг.

13 «Всеподданнейший отчет о состоянии Карсской области за 1893 г.», Карс, 1894, стр. 16.

160125 գլխով կամ 1906 թ. հետ համեմատած ավելի քան 16%-ով[14]։ Անասնագլխի կրճատման մյուս պատճառը անասնատեսակների քանակական հարաբերակցության փոփոխությունն էր։ Բանն այն էր, որ երկրագործության ու կաթնապրանքային տնտեսության զարգացման պայմաններում մանր եղջերավոր անասուններն աստիճանաբար իրենց տեղը զիջում են խոշոր եղջերավորներին։ 1884—1913 թթ. մարզում խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակն աճել է 3,2 անգամ, իսկ մանր եղջերավորներինն՝ ընդամենը 1,8 անգամ։ Կամ, եթե 1884 թ. խոշոր եղջերավոր անասունների տեսակարար կշիռն ամբողջ անասնաքանակի մեջ կազմում էր 31,8%, ապա 1913 թ.՝ 45,1%։ Մանր եղջերավոր անասունների տեսակարար կշիռն այդ նույն ժամանակաշրջանում 64,3%-ից նվազել է մինչև 51,5%-ի։ Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակի աճի գործում որոշ դեր խաղաց նաև XX դ. սկզբներին մարզում բնակվող քրդերի մի մասի նստակեցության անցնելու հանգամանքը, որի հետևանքով նրանց տնտեսություններում ևս խոշոր եղջերավոր անասունները սկսեցին կարևոր դեր խաղալ։ 1910 թ. Կաղզվանի օկրուգի պետ իշխան Ջավախովը հայտնում էր, որ վերջին տասնամյակում քրդերն անցել են նստակեցության և աստիճանաբար ընդարձակում են իրենց ցանքատարածությունները[15]։

Բացի խոշոր և մանր եղջերավոր անասուններից, մարզում պահվում էին որոշ քանակությամբ ձիեր, ջորիներ, խոզեր և այլն։ Համեմատաբար զարգացած էր ձիաբուծությունը։ 1884—1911 թթ. մարզի ձիերի գլխաքանակն ավելի քան կրկնապատկվել է՝ 15164 գլխից հասնելով 32818 գլխի[16]։ Ձիու աշխատանքն ավելի մեծ չափերով օգտագործում էին ռուս վերաբնակիչները։ Նշված ժամանակաշրջանում ավելի դանդաղ է աճել էշերի և ջորիների գլխաքանակը։ Մի քանի հազարի հասնող այս անասունները լեռնային վայրերի բնակչության համար անփոխարինելի փոխադրամիջոց էին։ 1890-ական թվականների կեսերից սկսած ռուս վերաբնակիչների ջանքերի շնորհիվ որոշ տարածում է գտնում նաև խոզաբուծությունը։ Դրա շնորհիվ 1895—1913 թթ. խոզերի քանակը 241 գլխից հասնում է 3221-ի[17]։

Մարզի անասնապահությունը գնալով ստանում էր ապրանքային բնույթ։ Պաշտոնական տվյալներով 1894 թ. ներքին շուկաներում վաճառքի է հանվել 25 հազար, իսկ արտաքին շուկաներում՝ 45 հազար ոչխար։ Այդ նույն ժամանակ վաճառվել է 8000 փութ բուրդ և այլն[18]։ Անասնապահության ճյուղերից բարձր ապրանքայնություն ուներ ոչ նրբագեղմ ոչխարաբուծությունը։ Մարզից մեծ քանակությամբ ոչխարներ էին վաճառվում Բաքվից, Երևանից և Անգրկովկասի այլ քաղաքներից եկած վաճառականներին։ Արդահանի և Օլթու օկրուգների անասնատերերը անասուն էին արտահանում Թիֆլիս, Քութայիսի նահանգ և Բաթումիի մարզ։ Առևտրային անասնապահության զարգացման հե-

---

14 «Обзор Карсской области за 1907 г.», Карс, 1918, стр. 14.

15 «Карс». 1910, № 23.

16 «Всеподданнейший отчет о состоянии Карсской области за 1884 г.», Карс, 1885, ведомость и «Кавказский календарь на 1913 г.», Тифлис, 1912, отд. стат. стр. 279.

17 «Обзор Карсской области за 1895 г.», Карс, 1896, ведомость и «Кавказский календарь на 1915 г.», Тифлис, 1914, отд. стат., стр. 333.

18 «Район Тифлисско-Карсско-Эриванской железной дороги в экономическом и коммерческом отношениях», Тифлис, 1897, стр. 434.

տեանքով դնալով անասունների գները բարձրանում էին։ Այսպես, Կովկասի գյուղատնտեսական վիճակագրության տվյալների համաձայն, 1910 թ. մեկ գույգ եղը արժեր 97, 1911 թ.՝ 130, իսկ 1912 թ.՝ 154 ռ.։ Այդ նույն տարիներին կովը վաճառվում էր համապատասխանաբար 34, 36, 42 ռ., իսկ ոչխարը՝ 7,5, 9 և 10,1 ռ.[19]։

Կարսի մարզի անասունների արտահանման հաշվեկշիռը, համեմատած ներմուծման հետ, խիստ ակտիվ էր։ 1909—1913 թթ. տարեկան միջին հաշվով մարզ է ներմուծվել 16456 փութ մանր և խոշոր եղջերավոր անասուն, իսկ այդ նույն ժամանակ մարզից արտահանվել է միջին հաշվով 63072 փութ մանր և խոշոր եղջերավոր անասուն[20]։ Փաստերը ցույց են տալիս, որ Կարսի մարզից մի քանի անգամ ավելի է անասուն արտահանվել վաճառքի, քան Երևանի նահանգից։ Միայն 1907 թ. մարզից արտահանվել է մոտ 35 հազար գլուխ ոչխար և այծ, այն դեպքում, երբ Արևելյան Հայաստանի մյուս շրջաններից արտահանվել է ընդամենը 13 հազար գլուխ[21]։

XX դ. սկզբին մարզում սկսեց արագ թափով զարգանալ նաև կաթնապրանքային տնտեսությունը։ Հիմնվեցին կաթնամշակման ձեռնարկություններ, որոնցում մշակված կաթնամթերքը (պանիր, յուղ) արտահանվում էր Թիֆլիս, Դոնի Ռոստով, Մոսկվա, Օդեսա և այլ քաղաքներ։ 1910 թ. մարզում գործող 24 խոշոր կաթնամշակման ձեռնարկություններն ունեին 8093 ցեղային բարձր կաթնատու կովեր, որոնցից տարեկան ստացվում էր 6444 փութ յուղ և 1366 փութ պանիր։ Այդ ձեռնարկությունների տարեկան եկամուտը կազմում էր 261 հազար ռուբլի[22]։ Մեկ փութ պանիրը վաճառվում էր 10—14 ռ., իսկ յուղը՝ 12—18 ռ.։ Վ. Ի. Լենինն անդրադառնալով անասնապահական շրջաններում կաթնատնտեսության զարգացման հարցին, նշում էր, որ «...այստեղ կարևոր է ո՛չ թե եղջերավոր անասունների բացարձակ քանակությունը, այլ հենց կաթնատու անասունների քանակն ու նրանց որակը»[23]։ Արդեն 1912 թ. միայն Կարսի և Արդահանի օկրուգներում գործում էին պանրի և յուղի մշակման 27 խոշոր ձեռնարկություններ, որոնք ունեին 18175 բարձր կաթնատու կովեր։ Այդ գործարաններում 1912 թ. արտադրվել է 27743 փութ շվեյցարական, 815 փութ հոլանդական պանիր և 8661 փութ կարագ։ Մարզում գործում էին նաև պանրի մշակման 31 կետեր։ Վերոհիշյալ բոլոր ձեռնարկությունների և կետերի եկամուտը 1912 թ. կազմել է 500 հազ. ռուբլի[24]։ 1914 թ. մարզում գործում էին պանրի և յուղի մշակման 55 խոշոր ու մանր ձեռնարկություններ[25]։ «Կաթնային տնտեսության շահավետությունը, —գրում էր «Կարս» շաբաթաթերթը,— գիտակցում են իրենք՝ բնակիչները, և ամեն տարի պանրագործական և յուղագործական ձեռնարկությունները շատանում են»[26]։ Վերոհիշյալի շնորհիվ մարզում գնալով մեծանում էր պանրի և յուղի արտադրությունն ու վաճառքը։

---

19 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 375, ց. 1, գ. 74, թ. 14։

20 Նույն տեղում, գ. 117, թ. 22։

21 Ա. Ս. Ամբարյան, նշվ. աշխ., էջ 189։

22 «Обзор Карсской области за 1910 г.», Карс, 1911, стр. 35.

23 Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Երևան, 1975, էջ 315։

24 «Журнал заседания съезда окружных начальников Карсской области 17—21-го мая 1913 года», Карс, 1913, стр. 59.

25 Ա. Մ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 155։

26 «Карс», 1913, № 15.

Այդ տեսակետից մարզն ամբողջ Անդրկովկասում զիջում էր միայն Բորչալուի գավառին։

Այսպիսով, Կարսի մարզի միացումը Ռուսաստանին բարերար ազդեցություն ունեցավ նրա գյուղատնտեսության զարգացման համար։ Առանձնապես նշանակալի վերելք ապրեցին հացահատիկային կուլտուրաների մշակումն ու անասնապահությունը։ Գյուղատնտեսության այս երկու կարևոր ճյուղերն էլ ներքաշվեցին շուկայական հարաբերությունների մեջ և հիմք հանդիսացան գյուղում կապիտալիստական հարաբերությունների զարգացման համար։

РАЗВИТИЕ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА В КАРССКОЙ ОБЛАСТИ (конец XIX—начало XX вв.)

АРАРАТ АКОПЯН

Резюме

Присоединение Карсской области к России имело прогрессивное значение не только с политической, но и с экономической точки зрения.

После присоединения значительно развилось сельское хозяйство области и, в частности, две основные отрасли, определяющие ее экономический облик — хлебопашество и скотоводство, которые вследствие вовлечения их в сферу рыночных связей, явились основой зарождения капиталистических отношений в деревне.